

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՂԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Յուլիս 26, 2020

SUNDAY, July 26, 2020

9215 SE Church St., Clackamas, OR 97015



ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Մատթեոս 18:10-14

Զգո՛յշ եղէք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարիէք. ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ շօր, որ երկնքում է. որովհետեւ մարդու Որդին եկաւ փրկելու կորածը»: «Ձեզ ինչպե՛ս է թւում. եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ նրանցից մեկը մոլորուի, իննսունինը ոչխարը լերան վրայ չի՞ թողնի ու գնայ որոնելու մոլորուածին: Եւ եթէ պատահի, որ այն գտնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ նրա վրայ աւելի կ'ուրախանայ, քան իննսունիննի վրայ, որ մոլորուած չէն: Այսպէս՝ իմ երկնաւոր շօր կամքը չէ, որ այս փոքրիկներից մեկը կորչի»:






GOSPEL READING

Matthew 18:10-14

“Take heed that you do not despise one of these little ones, for I say to you that in heaven their angels always see the face of My Father who is in heaven. For the Son of Man has come to save that which was lost.

“What do you think? If a man has a hundred sheep, and one of them goes astray, does he not leave the ninety-nine and go to the mountains to seek the one that is straying? And if he should find it, assuredly, I say to you, he rejoices more over that sheep than over the ninety-nine that did not go astray. Even so it is not the will of your Father who is in heaven that one of these little ones should perish.



ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տերտերեան



Մեր է անունդ, Աստուած իմ. սիրոյ հրաւերն է ներկայութիւնը բոլոր այն հոգիներուն համար, որոնք հաւատքի գիտակցութեամբ սիրոյ կրակը վառ կը պահեն իրենց հոգիներուն մէջ: Քու սերդ իմ մէջ թող նոր կրակ ցանէ: Այդ կրակը Քու աստուածային բնութեանդ ճառագայթումը պիտի ըլլայ հոգոյս մէջ:

Վերնաստան բնակիչն եւ Աստուած բոլորին: Քեզի ընծայուած աղօթքներով առաջնորդութիւնը մեզ կը բերէ Վերնաստուն, ուր նորովի կ'ապինք հոգեգալուստը մեր օրին: Հոն է տեղը, ուր կը պայծառակերպուինք, զի Քու աստուածային ներգործութիւնը կը ներթափանցէ հոգիներէն ներս, որպէսզի ջուրերուն վրայ բացուած առագաստը մեր կեանքին չխորտակուի յաւէտ:

PRAYER

By Archbishop Hovnan Derderian



Your name is Love, O Lord my God; an invitation to love for all those who keep the flame of love in their souls through conscious faith. Let your love spark a new “fire” in me, O Lord, a “fire” that will shine your divine nature in my soul.

You are the resident of the Upper Room, O God of All. Our prayers offered to you lead us to the Upper Room, where we live anew the Pentecost of our day. It is the place where we all are transfigured through your divine pouring into our souls, so that the sail of our life opened on the rough waters does not sink forever.

Ս. ԹԱՂԷՆՍ ԱՌԱՔԵԱԼ ԵՒ Ս. ՍԱՆՂՈՒԽՏ ԿՈՅՍ

Սուրբ Թաղէնս առաքեալը եւ Ս. Սանղուխտ կոյսը Հայ եկեղեցու ամենանշանաւոր տօնելի սրբերից են, քանի որ նրանց անուան հետ է առընչուում հայոց լուսաւորութեան պատմութիւնը: Քրիստոսի Համբարձումից յետոյ, համաձայն Տիրոջ պատգամի՝ «Գնացեք, ուրեմն աշակերտ դարձրէք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28:19), Ս. Թաղէնսը նախ գալիս է Եդեսիա, աւետարանում կենաց խօսքը, ի թիւս բազում հրաշքների՝ բժշկում նաեւ Աբգար թագաւորին, ապա, իրեն փոխարինող նշանակելով Եդեսիայում, գնում է Հայոց Սանատրուկ արքայի տիրոյթները: Այստեղ զանազան վայրերում քարոզելուց յետոյ բազմաթիւ հեթանոսների է քրիստոնէական հաւատի բերում եւ հիմնադրում Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին: Գալով Արտազ գաւառ, առաքեալը մտնում է հայոց արքունիք եւ դարձի բերում արքայադուստր Սանղուխտ կոյսին: Իրազեկ դառնալով այդ ամէնին՝ հայոց Սանատրուկ արքան սկզբում յորդորում է դստերը ետ դառնալ նախկին հաւատին, սակայն ապարդիւն: Զայրացած արքան թէ Թաղէնս առաքեալին եւ թէ Սանղուխտ կոյսին նետում է բանտ եւ դաժան տանջանքների ենթարկում: Արքունի իշխանագուն կառավարչի միջոցով արքայադստերը տարհամոզելու վերջին փորձը եւս ապարդիւն է անցնում: Քրիստոնէայ է դառնում նաեւ կառավարիչը: Ի վերջոյ, արքայի հրամանով Ս. Թաղէնս առաքեալը եւ Ս. Սանղուխտ կոյսը նահատակում են արքայական ամառանոց Շաւարշաւան գիւղաքաղաքում: Հայ Եկեղեցին Ս. Թաղէնս առաքեալի յիշատակը տարուայ ընթացքում ոգեկոչում է երկու անգամ. նախ՝ Ս. Բարդուղիմէոս առաքեալի, ապա՝ Ս. Սանղուխտ կոյսի հետ: (Աղբիւրը՝ araratian-tem.am):



SAINT SANTOUKHT

Saint Santoukht was born in Armenia and was the daughter of Sanadrouk, an Armenian king. When the apostle Thaddeus established Christianity in Edessa, he came to Armenia and lived in the province of Artaz near the residence of King Sanadrouk and began to preach the gospel and heal the sick.

Many people accepted Christianity so enthusiastically that their influence was felt in the palace of the king. Santoukht was also influenced by Thaddeus' preaching and was converted and became one of his staunch disciples.

King Sanadrouk was furious with his daughter and immediately imprisoned her.

The apostle Thaddeus encouraged Santoukht to remain faithful. Inspired by her faithfulness at this time, thirty-three prison guards accepted Christianity as their religion.

Santoukht was brought before the king who tried to convince her that she should return to her old belief and reject Christianity. The king placed before her a crown - symbol of a comfortable and privileged life as a royal, but pagan, princess - and a sword - symbol of her execution should she continue following Christ. Even though Santoukht knew it meant her martyrdom, she chose the sword, remaining faithful to her Lord. She was sentenced to death.

At the time of her martyrdom, St. Santoukht was around eighteen years of age, although some historians think she was younger. In any event, she is accepted as the first Christian martyr of Armenia.

The Armenian Church celebrates her memory every year at the beginning of summer when the memory of St. Thaddeus is celebrated.

ՄԻ ՐՈՊԷ ԵԿԷՔ ՄՏԱՍԵՆՔ

ՀԱՅԵՐԷՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ահաւոր նահանջը էապէս ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ շարունակութիւնն է, այս անգամ մեր սեփական ձեռքով կատարուող....Մեր կոխկոտուած իրաւունքներուն վերատիրանալու պայքարը երկարատեւ պայքար է, որուն յաջող ելքը գերազանցօրէն կախեալ է նաեւ հակառակորդ կողմի «կամեցողութենէն»....Սակայն հայ մնալը, մեր լեզուն կենսունակ պահելը մեր ձեռքն է....

ՄԵԶՄԷ ԿԱՄԵԱԼ Է ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷՆ....Լեզուական նահանջը, ինչ որ ազգային էութենէն նահանջ կը նշանակէ, մեր ՊՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆ Է.... Պիտի շարունակէ՞նք ԻՆՔՆԱՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ....

SHORT STORIES

Everyone Has a Story in Life

A 24 year old boy seeing out from the train's window shouted...

"Dad, look the trees are going behind!"

Dad smiled and a young couple sitting nearby, looked at the 24 year old's childish behavior with pity, suddenly he again exclaimed...

"Dad, look the clouds are running with us!"

The couple couldn't resist and said to the old man...

"Why don't you take your son to a good doctor?" The old man smiled and said..."I did and we are just coming from the hospital, my son was blind from birth, he just got his eyes today."

Every single person on the planet has a story. Don't judge people before you truly know them. The truth might surprise you.

The Elephant Rope

As a man was passing the elephants, he suddenly stopped, confused by the fact that these huge creatures were being held by only a small rope tied to their front leg. No chains, no cages. It was obvious that the elephants could, at anytime, break away from their bonds but for some reason, they did not.

He saw a trainer nearby and asked why these animals just stood there and made no attempt to get away. "Well," trainer said, "when they are very young and much smaller we use the same size rope to tie them and, at that age, it's enough to hold them. As they grow up, they are conditioned to believe they cannot break away.

They believe the rope can still hold them, so they never try to break free."

The man was amazed. These animals could at any time break free from their bonds but because they believed they couldn't, they were stuck right where they were.

Like the elephants, how many of us go through life hanging onto a belief that we cannot do something, simply because we failed at it once before?

Failure is part of learning; we should never give up the struggle in life.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ՄԻ՛ ԴԱՏԷՔ ԱՆՁ ՄԸ, ԵՐԲ ԼԱԻ ԾԱՆՕԹ ՉԷՔ ԻՐ ԱՊՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ...

Շոգեկառքին մեջ հայր մը ու իր 25-ամեայ տղան նստած են, երբ յանկարծ տղան կը ճչայ.

-Ծառերը դէպի ետեւ կը վազեն...

Հայրը կը ժպտի, բայց քանի մը աթոռ ետեւ նստող երիտասարդները կը ծիծաղին...

Քիչ ետք տղան կրկին կը ճչայ.

-Հայրի՛կ, ամպերը մեզի հետ կը քալեն...

Հայրը կրկին կը ժպտի, սակայն այս անգամ երիտասարդներէն մէկը կը մօտենայ հօրը ու կ'ըսէ.

-Ինչո՞ւ տղադ լաւ բժիշկի մը չես տանիր...

Հայրը մեղմ ձայնով կը պատասխանէ երիտասարդին.

-Արդէն տարի, մենք նոր հիւանդանոցէն դուրս եկանք...տղաս ի ծնէ կոյր եր...այսօր առաջին անգամ ըլլալով կը տեսնէ...

Մի՛ դատեք... մինչեւ որ լաւ չճանչնաք անձը...

Կարելի՞ է ուրախանալ, վշտացնելով ուրիշները...

Օր մը երկու ընկեր ձանձրացած կը քալէին, երբ կը նկատեն թէ աղքատ մարդ մը կօշիկներն ու հագուստները գետափին ձգած, իջած է գետակ՝ ձուկ որսալու...

Առաջին ընկերը կ'ըսէ.

-Ահա եւ զբաղում, եկուր աղքատին հագուստներն ու կօշիկները պահենք ու հեռուէն դիտենք թէ որքան պիտի շուարի եւ որքան ամչցած պիտի վազէ տուն... Հաճելի կ'ըլլայ չէ՞ ...

Երկրորդ ընկերը կ'ըսէ.

-Խեղճ ու կրակ աղքատին տագնապի մատնելու փոխարէն, ես կ'առաջարկեմ, որ կօշիկներէն ամէն մէկուն մէջ յիսուն սօլար դնենք ու հեռուէն դիտենք, թէ որքան պիտի ուրախանայ ու որքան երջանկացած պիտի վազէ իր ընտանիքին մօտ... Աւելի հաճելի կ'ըլլայ չէ՞ ...

Մենք ալ մեր ուրախութիւնը երբեք չհիմնենք ուրիշին դժբախտութեան վրայ...

Արդեօք ասելի լաւ պիտի չ'ըլլա՞ր ամնել աղքատին կօշիկները, քայց ոչ թէ պահելու համար, այլ՝ առաջին ընկերոջ գլխուն հարուածելու...



ՄԱՏԱՆԱՆ

Մատանան հայտնվում է մի մարդու մոտ
էւ մտածում. «Զգայթակղե՞մ այս մարդուն» :

Ու նրան ասում.

Նո՛ւր ինձ քո հոգին, եւ ես քեզ ցույց

կտամ՝ որքա՛ն լավն ու գեղեցիկ է դժոխքը:

Համաձայնվեց մարդը, ուզեց մի կարճ ժամանակով գնալ,
նախապէս տեսնել, թէ ինչ է կատարվում դժոխքում: Նրանք
իջան ընկած հրեշտակի հետ դժոխք. այնտեղ ձայներ էին,
զվարճանք, գեղեցկություն, ամենուրեք ուրախ մարդիկ, լի՝
համեղ ուտեստներով, ամեն ինչ պարզապէս հիանալի էր:
Մարդը նայեց շուրջօրոյրը, շրջեց ամենուր. եւ սատանան
հարցրեց նրան. «Դե՞, հոգիդ տալի՞ս ես» : Մտածեց
մարդը. «Դե՛, քանի որ դժոխքն այսքան հիանալի է. իսկ ինչո՞ւ
ոչ» : Այնուհետեւ մի փոքրիկ դէւ հայտնվեց՝ ձեռքին
պայմանագիր, մարդը ստորագրեց այն եւ վերադարձավ
սովորական կյանք:

Շատ տարիներ անցան եւ նրա ժամանակը հասավ ...

Մարդը մահացավ, եւ ըստ պայմանագրի՝ գնաց դժոխք:

Սակայն այնտեղ լիակատար գարշահոտություն
էր, եռացող կաթասներ, տանջվող, մեղավորներ, ճչոցներ,
դէւերը տապակում, այրում, եփում էին մարդկանց, փշոտ
նիզակներով ծակծկում: Մարդը սկսեց տագնապով փնտրել

սատանային,
գտավ նրան, մոտեցավ եւ հարցրեց.
Լսի՛ր, դու ինձ լրիվ ա՛յլ բան էիր ցույց
տվել, թե ինչքան հիանալի է ամեն ինչ.
սա ի՞նչ է: Եւ Սատանան պատասխանեց. Ե՛հ, սիրելի՛ս,
մի՛ շփոթիր տուրիզմն ու քաղաքացիությունը:

*ՄԱՏԹԷՈՍ 7:13 «Ինչքա՛ն լայն է դուռը
եւ ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում,
եւ բազմաթիվ են նրանք, որ մտնում են»:*



REQUIEM SERVICE

Upon the conclusion of the Divine Liturgy, we will
conduct Requiem Service for the following:

✠ **Varoujan Tarpinian**
Occasion 40 days

Requested by

🌿 Tarpinian family.- **Mary Tarpinian (Mother)**
🌿 **Sossy Tarpinian Tahan (sister)**

May the God Lord rest the soul of His servants in peace
and grant the comfort of the Holy Spirit to the family
members.

